

Ֆինանսական կառավարումը՝ բարձրագույն կրթության բնագավառում

Ըստ՝ Contrast Management Consulting,
WUS (World University Service) Austria

Հիմնական հիմնախնդիրները՝

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը
2. Գործողությունների և արդյունքների կառավարումը ԲՈՒՀ-երում
(performance management in higher education)

Հիմնական ռիսկերը

▶ Ռիսկ 1 - մեկ ուսանողի համար կատարվող ծախսերի աճ

- ▶ Աճող տեխնոլոգիական պահանջներ
- ▶ Ընդհանուր աճող պահանջներ (customer demand) բարձրագույն կրթության նկատմամբ
- ▶ Կարիք՝ մշտապես արդիականացնելու կրթական ծրագրերը և բարելավելու որակը
- ▶ Դասախոսների և ադմինիստրատիվ անձնակազմի աշխատավարձերի աճ

▶ Ռիսկ 2 - ուսանողների քանակի շարունակական աճ

- ▶ Մասնակցության առավել բարձր աստիճան՝ առավել շատ մարդիկ են ուզում սովորել
- ▶ Մեկ ուսանողի առումով մատուցվող կրթական ծառայությունների/ ծախսերի աճ

Ծախսերի ընդհանուր ավելացում - հիմնական ռիսկ
բարձրագույն կրթության հաստատությունների համար

Ծախսերի ավելացումը հաղթահարելու հիմնական ուղիները

- ▶ Ուսման վճարների ավելացում
- ▶ Տարբերակում կրթական և գիտահետազոտական ծառայությունների միջև
- ▶ Մասնավոր ֆինանսավորման չափի ավելացում
- ▶ Համալսարանների շուկայական ուղղվածություն (հետազոտություններ, ծառայություններ, նոր մասնագիտություններ)
- ▶ Մրցակցային ֆինանսավորում
- ▶ Ֆինանսավորում, ըստ գործողությունների արդյունքների (performance based funding)

Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնական աղբյուրները

1. Հանրային (պետական) աղբյուրներ
2. Ուսման վճարներ՝ ուսանողներից, ծնողներից
3. Այլ աղբյուրներից՝ մասնավոր ձեռնարկություններ, հիմնադրամներ և այլն
4. Ընդհանուր առմամբ, այլ Եվրոպական երկրների համեմատությամբ, Հայաստանը ծախսում է ՀՆԱ-ի առավել քիչ մասնաբաժին բարձրագույն կրթության համար՝
 - ▶ Հայաստան՝ ՀՆԱ-ի 3.1%
 - ▶ Ուկրաինա՝ ՀՆԱ-ի 6.2%
 - ▶ Ավստրիա՝ ՀՆԱ-ի 5.8%
 - ▶ Ըստ 2008 թ. տվյալների

Քննարկման հիմնական թեմաները՝ ըստ հիմնախնդիրների

1. Կրթական համակարգը բարեփոխում, ըստ շուկայի պահանջների
2. Մատուցված կրթական ծառայությունների որակի բարձրացում
3. Բարձրագույն կրթության ենթակառուցվածքների և աշխատակազմի որակի բարելավում
4. Ուսանողների քանակի աճի հետ առնչվող խնդիրների արդյունավետ լուծում
5. Բարձրագույն կրթության մատչելիությունն հասարակության բոլոր խմբերի անդամների համար

	Ֆինանսավորման աղբյուրները			Ֆինանսական աջակցություն ուսանողներին	Հարաբերությունը կրթության և հետազոտության միջև
	Պետական	Ուսանողներ	Այլ աղբյուրներ		
Միացյալ թագավորություն	38%	24%	38%	Շատ լավ զարգացած, երկարատև փորձ	Ֆինանսավորվում են առանձին, տարբեր հաստատությունների միջոցով
Ֆինլանդիա	65%	35%		Ուսանողները ստանում են օժանդակություն՝ ապրելու ծախսերը հոգալու համար	Ֆինանսավորվում և արդյունքները գնահատվում են առանձին
Ավստրա	78%	16%	6%	Աջակցություն՝ առաջադիմության և կարիքների հիման վրա	Չի տարբերակվում

Ավստրիական կրթական համակարգը

1. ԲՈՒՀ-երն անկախ են՝ ունեն անկախ իրավական կարգավիճակ
2. Ստանում են պետական ֆինանսավորում՝ ըստ եռամյա բյուջեի
3. Ունեն գործողությունների պայմանագիր՝ Գիտության և հետազոտության նախարարության հետ
4. Ինքնուրույնաբար կարող են կազմակերպել լրացուցիչ դրամահավաք՝ իրենց կարիքները հոգալու համար
5. ԲՈՒՀ- բյուջեն.
 - Կապված է ֆեդերալ բյուջեի հատկացումներից
 - Բանակցվում է գիտության և հետազոտության նախարարության հետ
 - Կապված և նախկին գործողությունների արդյունքների հետ

ԲՈՒՀ-ի հետ գործողությունների պայմանագրի օրինակ, Ավստրիա

Ներառում է.

1. Ռազմավարական նպատակներ, դիրքավորում, համալսարանի զարգացում
 1. Որակի ապահովում
 2. Անձնակազմի զարգացում և կառուցվածք
2. Հետազոտություններ/զարգացում
 1. Ազգային ենթակառուցվածքներ
 2. Միջազգային ենթակառուցվածքներ
3. Ուսումնական ծրագրեր/ուսուցում
4. Լրացուցիչ կրթություն
5. Այլ
 1. Հասարակական խնդիրներ
 2. Միջազգայնացում, շարժունակություն
 3. Համագործակցություն և այլն